

1.7.1938

ԿԱՆԳԱՐԴԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1

Մ. 28

Կ. ՄՐ. ԻՄՍՏԻ

h 9.

# ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ

Թարգմ. ԳՐԱԲԻՈՍ



891.71-3:355

U-88

ար

ՌԱԶՄԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ

30 OCT 2006  
-6 NOV 2011

1002  
5370





Յերեք ծխնելույզով հսկայական շոգենավը,  
ամբողջապես չըջապատված ծխով, մոտենում է  
նավահանգստին, որորվելով աջ ու ձախ: Ներ-  
քեից, նավամատուցի կողմից լավում է բեռնորդ-  
ների թըխկթխկոցը և վեր բարձրացող շղթաների  
չառաչը.—բեռնաթափում են ոտարերկրյա շոգե-  
նավերը: Շոգենավից ճանկում են տրակտորներով  
լի արկղները և ճոճելով ողում՝ խնամքով իջեցնում  
են նավահանգստի փովածքի վրա: Ափի յերկարու-  
թյամբ անցնում է յերկաթուղին: Ապրանքատար  
վազոնների կարմիր շարքերը հասնում են մինչև  
նավահանգստի մոտ:

Կ. բանակային Բոկատցեվը հայացքը ծովին է  
հառել: Հեռու, շատ հեռու, այնտեղ, վորտեղ ծո-  
վը միանում է հորիզոնի հետ, յերևում են ձկնոր-  
սանավերի առազասանները, վորոնք վորսի յեն  
դուրս յեկել:

— Ընկեր կարմիր բանակային, դուք ժամա-  
ցույց ունե՞ք. չգիտե՞ք արդյոք ժամի քանիսն է,—  
ձայնը կանացի յեր:

Բոկատցեվը դարձրեց գլուխը և հանդիպեց  
խորամանկորեն ժպտացող մի դույզ աչքերի: Այդ  
հայացքը ստիպեց Բոկատցեվին շիկնել: Կինը յե-

ՀԱՅՊՈՒԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրատեպ. 645 բ. պատվեր 2479 Տիրած 5000



րիտասարդ երևալու գեղեցիկ: Բողատեցին այնպես եր տարվել ձկնորսներին ղրտելով, վոր նույնիսկ չնկատեց, ինչպես այդ կինը նստեց իր կողքին:

— Բայց ինչո՞ւ չեք պատասխանում ինձ, — շարունակեց հարևանուհին, — այդ մինչև իսկ անբազաքավարութուն ե, — և նորից Ժպտաց:

Դժվար ե հասկանալ՝ ճաղրում ե արդյոք, թի փաղաքչել ե ուզում...

Նման գեղեցկուհիներ, ինչպիսին այս մեկն եր, Բողատեցը դեռ չեր տեսել: Շքեղ վոսկեփայլ մազերը կարծես վառվում եյին արևի ճառագայթներ թի տակ, մութ աչքերը փայլատակում եյին...

Պատասխանել պետք ե, բայց բռռեր, հակառակի պես չեն դտնվում:

— Յես Ժամացույց չունեմ, քաղաքացուհի, բայց արևին նայած... Ժամի տանյերկուսը կըլինի...

— Շնորհակալ եմ, — պատասխանեց հարևանուհին:

Յեզվ յերեսը դարձրեց... Աչքերը ծովին ուզըղեց:

Բողատեցիը նույնպես հայացքը նույն կողմը դարձրեց... Ահա յերեք ծինելույցներով շողենուպը նափակարանին մոտեցալ: Արդեն ուղտըղ-

ներն տի են իջնում... Հարևանուհու մոտիկութունը չիտթեցնում ե նրան... Յեզվ ինչպես կամաց նստեց կողքին: Ուզում ե Բողատեցիը նայել լալ հարևանուհու վրա. դադտնադողի աչքերը թեքեց հարևանուհու կողմը:

Դե՞բքն նայելով՝ «տարներից ե», բուրժույկա յե կարծես, վարդազույն, թիսլի... Ձեռքերն ել նույնպես հարստի ձեռքեր են՝ անտովոր աշխատանքին: Բայց ահա յեթե հաղուտին նայես, նեպմանի կնջ բնավ նման չե: Մի հին ջըրջազգեստ ե հաղին, մինչև իսկ կարկատան ե նրկատվում, չթի կոՓոտա: Իսկ վոտներին հասարակ, կոպիտ կիսակոչիկներ... Մատներին ել վոչ մե հատ մատանի չկա...

Ժամանակն անցնում ե: Նստած են յերկուսով ել ու լուռ են...

Հանկարծ վոսկեծամ դըլիսը յես դարձալ դեպի Բողատեցիը.

— Ինչպես փոթորկոտ ե այստր ծովը ե վորտան գեղեցիկ: Ձե՞...

Հրացանաձիգը կրկին շիտթվեց, կրկին խոսք չի գտնում պատասխանելու...

— Վա՛հ, ինչո՞ւ չեք այդպես շիտթվում: Յես հո՞ չեմ կծի ձեզ: Միթե յես նման եմ այնպիսի դաղանի, վոր կարող ե կծել:



Յեւք ըրքջաց :

Աչքերը փայլում են, առամները փայլում, մազերը փայլում : Կին հո չե՞, դե ե :

— Յես չեմ կարծում, վոր դուք կծում եք, — նեղացած առարկեց Բոկատցեվը, — բայց վորո՞վ հետև յերևում ե, վոր դուք զարգացած կին եք...

Կինն իսկույն կտրեց Բոկատցեվի խոսքը.

— Ասենք այնքան ել զարգացած չեմ : Միայն յերկու տարի յեմ դպրոցում սովորել, և այն ել գյուղական դպրոցում :

— Ինչպե՞ս, միթե դուք գյուղից եք, — զարմացավ Բոկատցեվը...

— Ամենախակական գյուղից... Բայց կարծես, դուք ել եք գյուղից այնպես չե՞ : Նորե՞կ եք, թե հին բանակային : Վո՞ր նահանգից եք :

— Յես նորեկ զինվոր եմ, նորերս եմ միայն քաղաք յեկել... Յեկատերինոսլավի նահանգից...

— Այ քեզ բան : Յես ինքս եմ Յեկատերինոսլավի գավառից... Ուրեմն հայրենակիցներ ենք : Ինչպե՞ս ե ձեր գյուղում հիմա...

Ահա այստեղ ե, վոր բացվեց Բոկատցեվի լեզուն... Բանը յերբ գյուղին հասավ նա կարող ե սիրուն խոսքեր գտնել :

Յերկար ժամանակ պատմում եր Բոկատցեվը, գյուղի մասին, վերջապես ինքն ել հարց տվեց.

— Իսկ ինչպե՞ս ե ձեր անունը :

— Չպիտղանց պարզ անուն, հայր անուն ունեմ՝ Մարիա Իվանովնա, աղջանունս ե Պավլովա : Բայց դուք ինձ ուղղակի Մաշա կանչեք... Չե՞ վոր մենք պարզ մարդիկ ենք, և այն ել հայրենակիցներ :

Սկսեց Մաշան պատմել իր մասին : Տխուր պատմութիւն եր պատմածը :

Մանկության ժամանակ լավ ելին ապրում : Հայրը բանջարանոց ունեւր, քաղաք եր տանում բանջարեղենն ու վաճառում : Բայց փորձանք պատահեց. հայրն ու մայրը խոլերայից մեռան... Ստիպված յեղավ քաղաք տեղափոխվել, աղախին մտնել...

Այստեղ Մաշան սկսեց հայհոյել բուրժուայինը և անմիջապես բացատրեց պատճառը... Նա յեւբ քաղաք յեկավ, անփորձ եր, յերիտասարդ : Տիրոջ վորդին աչքը քցեց նրա վրա, մի որ հարբեցրեց ու բռնաբարեց : Գանդատվելու դնաց, բայց արդար դատաստան չգտավ : Տերը կաշառեց ում հարկավոր եր, և գործը քնեցրին : Պաշտոնից հեռացրին : Ստիպված եր քաղցած մնալ... Վրա հասավ հեղափոխութիւնը :

Մի ինչ-վոր պարտիզանական ջոկատ եր անցնում : Մտավ այնտեղ, վորպես գեթության քույր :



Բայց վերջը չդիմացալ, չարքը գնաց, հասարակ մարտիկ դարձալ:

Բովատցելի բերանը բայ եր մնացել՝ «ամաթի կին եմ ասում, հա՛»:

— Մի դարմացեք, ընկեր: Միայն յես չեյի այսպես քաջ... — Յեկ չարունակեց իր պատմությունը. վերջացալ քաղաքացիական պատերազմը: Թափառաչը իկ կյանքը ձանձրացրեց: Սկսեց պաշտոն վորոնել, բան դուրս չեկալ, — կիսազրազեո եր, ուսում չուներ: Ստիպված յեղալ կրկին ազախին դառնալու: Նորից ոտարների մոտ ե աղբում, սեփական կյանք չունի:

Խղճաց Բովատցելը: — Բանից դուրս ե գալիս մերոնցից ե, գեղջկուհի:

Ժամանակն անցնում ե, իսկ Մաշան պատմում ե ու պատմում... Հանկարծ ուշքի յեկալ.

— Վա՛յ ինձ. այս ինչ բանի վրա յեմ: Ա՛յ թե հիմա տանտիրուհիս չարացել ե: Մի յերեք ժամ կլինի յերեւի վոր ձեզ հետ խոսակցել եմ: Դե՛հ, ցտեսություն...

Կարմիր բանակայինը սեղմում ե ձեռքը ե մըտածում «իսկ ինչպե՞ս մի անգամ ել տեսնվեմ սրա հետ»:

Իսկ Մաշան կարծես գուշակեց նրա մխոքը.

— Դուք հաճա՞թ եք այստեղ գրոսնում:

— Ամեն կիրակի:

— Դե, լավ ե: Հաջորդ կիրակի հենց այստեղ ել կհանդիպենք. Լա՞վ:

— Շատ լավ, — ստատասխանեց բանակայինը, — հենց այս ժամանակ:

Մաշան հայացքով գուրգուրեց նրան, յետ դարձալ ու քայլեց...

Բովատցելը գորանոց եր գնում, բայց աչբերի առջևից Մաշան չի հեռանում:

— Յեկ ինչպես ե, վոր նա ինձ վրա ուշագրություն դարձրեց, — Մի հասարակ կարմիր բանակային եմ, ինքս ել վորչնչով աչքի չեմ բնկնում: Իսկ նա այնպիսին ե, վոր ով ասես, նրա յետեւից չի վազի: Վատ ե հանդեպած. բայց ինչպիսի գեղեցիկն ե...

Բովատցելն ամենից առաջ իր ուրախության մասին հաշորդեց իր հայրենակցին, — Վանյա Մակարենկոյին:

— Թե խմանաս այսոր յես ինչպիսի տիկնոջ հետ ծանոթացա: Ա՛յ կին... Այնպես վերաբերվեց հետս, կասես հարպատ լիներ: Մեր հայրենակցուհին ել ե, միևնույն նահանգից...

Վանյան հետաքրքրվեց, նա խամ տղա չեր: Սկսեց հարց ու փորձ անել, ի՞նչ տեսք ուներ,



ինչպես եր հագնված, ինչի մասին եյին խոսում . . .

Գեղեցկությանն ընդհանրապես չհավատաց :

— Դու միշտ ել, Պետրուխա, չափազանցնում ես . . . Չեմ հավատում, վոր նա այդքան դեղեցիկ լինի :

Բայց Բոկատցեվը չէր դիջում՝

— Կիրակի օրն ինքդ կտեսնես : Գնանք միասին :

Յերկար եր տեւում չարաթը : Կիրակին չէր համում : Վերջապես հասավ . . . Միասին գուրս յեկան գորանոցից . . . Անցան զբոսավայրը : Հասարակութունը լիքն է : Իսկ Մաշան չկա :

Մի ազատ նստարան գտան, նստեցին : Յերկար սպասեցին : Հանկարծ Բոկատցեվն աշխուժացավ .

— Ահա գալիս է : Տեսնում ես այն բարձրահասակը, կարմիր թաշկինակով . ահա դեպի գրասավայրն է թեքվում :

Շատ մոտեցավ . . . Հանկարծ հոնքերը կիսեց ի յետ դարձավ . . .

Մտկարեցնեցին աշխարհ տեսած տղա յեր . իսկույն գլխի ընկավ :

— Մաշադ բարկացավ, վոր ինձ հետդ բերել եյիր : Ճանաչում եմ քաղաքի կանանց, նրանք

միշտ ել ուզում են ամեն բան սուս ու փուս անել : Բայց ճիշտ վոր լավիկն է : Բախտդ կտրել է : Դե, դու նստիր, կերթամ . . . Կտեսնի, վոր մենակ ես, նորից կմոտենա . . .



Յեվ իրօք, մի հինգ ըոպեյից հետո, մոտեցավ, բարկացած եր յերեվում . . .

— Յես ձեզ հետ հանդիպելու եյի պայմանավորվել, իսկ դուք ընկեր ել եք բերում : Յես ուզում եյի փոքր ինչ խոսակցել հայրենակցիս հետ, իսկ դուք ուրիշներին եք հրավիրում այստեղ :

— Բայց նա յել է մեր հայրենակիցը, ոտար մարդ չե . միենույն գյուղիցն ենք :

— Դեհ, լավ : Միայն թե այսուհետեվ վոչ վո-



քի չբերեք ձեզ հետ : Ձե՛մ սիրում այդ : Այստեղից  
յեկեք հեռանանք մի այլ տեղ : Այսօր այստեղ  
ժողովուրդ շատ կա . հանկարծ տերերս ել կը  
տեսնեն :

Չբռնալալքից հեռացան . . . Երջում էլին փո-  
ղոցները . . .

Հարց ու փորձ և անում կարմիր բանակա-  
յին ապրուստի մասին . . . Յավում է , վոր Բո-  
կատցեվը քաղաքում մենակ և ապրում . . .

Բոկատցեվը բոլորովին փափկեց : Իսկ Մաչան  
փորձում է իր ամբողջ ուժը նրա վրա . մերթ  
այրում է հայացքով , մերթ հպում է տաք ձեռ-  
քով . . . Դուրս յեկան քաղաքից . սովեվում ան-  
տառակն և կանաչին տալիս :

— Մանենը անտառ , մի փոքր հանդստա-  
նանք , — առաջարկեց բանակայինը :

Նստեցին կանաչ խոտի վրա : Բոկատցեվը  
զրկեց Մաչային , համբուրում է նրա քնքուշ շքր-  
թունքները : Մաչան սրտասխանում է նրա համ-  
բուրյուններին , գուրզուրում և գլուխը , ուսը սեղ-  
մել և ուսին :

Յեվ միեմնույն ժամանակ զրուցում են ի-  
րար հետ : Չարմանալի յե , թե ինչպես և հա-  
կանում Մաչան կարմիր բանակային կյանքից :  
Իսկույն յերեվում է , վոր սրտախոյան և յեղել :

Նրա հարցերն ել զուտ ուղղական են :  
— Ծա՞ռ գնդացիր կա ձեր վաշտում :



— Կարողանում և արդյոք Բոկատցեվը ձեռ-  
րի նոնակներ նետել . . .

Իսկ ինքը պատմում է , թե ինչպես Դենի-  
կինի ճակատում մի ձեռքի նոնակով ավրել է  
ամբողջ խրճիթը՝ լի սպաներով : Չարմանում է  
բանակայինը՝ «Այ քեզ կին» : Ինքն ել իր հեր-  
թին հարցնում է .

— Իսկ գնդացրից դուք կարո՞ղ եք կրակել :

— Իհարկե : Բանի-քանի անգամ կրակել եմ  
հրացաններից , գնդացրերից : Գլխավորապես կրա-



կել եմ... Կա՛յ ձեր վաշտում կան Հրացան-գնդա-  
ցրեր:

— Կան, — պատասխանում է Բոկատցեվը,  
— բարդ բան է: Հենց յերեկ դասակի հրամանա-  
տարը բացատրեց, թե ինչպես պետք է վարվել  
այդ հրացանների հետ:

Յեվ ամեն ինչ, ամեն ինչ հետաքրքրում է  
Մաշային... Ինչքան բանակային կա վաշտում,  
լավ է վերաբերվում արդյոք հրամկազմը, լավ  
է արդյոք կերակուրը...

Ուրախությամբ պատասխանում է Բոկատ-  
ցեվը նրա բոլոր հարցերին... Մտաայուցյունը  
գո՛վում է, կերակրից գո՛հ է...

Կրկին համբուրվում են: Ակտում է մթնել...  
Ժամանակը սլանում է...

— Ժամանակ է տուն դնալու, — ասում է  
Մաշան, — հաջորդ կիրակի որը կտեսնվենք... Յե-  
թե ուզում եք, իհարկե...

— Ինչպես չեմ ուզում: Իսկ վորտեղ կհան-  
դիպենք:

— Հենց այստեղ, անտառում, Ժամի տա-  
ներկուսին: Այնպես չե՞:

Բոկատցեվը ճանապարհ դրեց Մաշային  
մինչև վաղաք, իսկ այնտեղից դենը Մաշան թույլ  
չտվեց միասին քայլել:

— Ինքս ճանապարհը գիտեմ: Յտեսություն  
առայժմ...

Բոկատցեվը զորանոց յեկավ: Մակարենկոն  
արդեն սպասում էր նրան:

— Հը՞, ի՞նչ խաբար: Լավ զբոսնեցի՞ք: Բայց  
ինչ վոր ճիշտ է, ճիշտ է, շատ լավիկն է:

Մակարենկոն լսում է Բոկատցեվի պատմու-  
թյունը... Ինչ էլին անում, ինչի՛ մասին էլին խո-  
սում...

Միայն թե Բոկատցեվը խոսածի մասին քիչ  
է պատմում... Ա՛յ, թե ինչ էլին անում, այդ ա-  
վելի հետաքրքիր է:

— Շատ զիլ է համբուրվում, — պարծենում է  
Բոկատցեվը:

— Լավ, իսկ հետո,

— Սպասիր մի փոքր: Շատ ես վազում: Ա-  
մեն ինչ լավ կլինի... խոստացավ կիրակի որը  
հանդիպել...

— Բախտդ բերում է, Պետյա, այդպիսի մեկը  
քեզ պես դմբոյի փայ է յեղել:

— Ինքը ես դմբո: Իմացելը, վոր փափախի  
տակին մարդ կա, — ծիծաղում է Բոկատցեվը, —  
ա՛յ, սպասիր, թե դեռ կիրակի որը ինչ կլինի...

Բայց Բոկատցեվը Մաշային հանդիպեց մի  
փոքր ավելի վաղ:

Շաբաթ որը Բոկատցեվին հանձնարարեցին



մի ծրար տանել գնդի հրամանատարի բնակարանը :

Յեղանակը սքանչելի յեր : Գայլում և Բոկատ-  
ցեկը փողոցով, առանց շտապելու : Փողոցում լի-  
քը բազմութիւնն և, մայթով անցնել չի լինում . . .

Դարձրեց Բոկատցեկը գլուխը և քարացով  
տեղում . . .



Հարեման տնից դուրս և գալիս մի դարդար-  
ված կին, ամբողջապես մետաքսի մեջ, փետուրնե-

րով գլխարկը գլխին, հովանոցը ձեռքին . . . դեմ-  
քով՝ Մաշան :

Ուշի-ուշով դէտում և Բոկատցեկը, նա յի,  
վոր կա . . . Ահա և այտի խաղ :

Ինչ բան և, յերազ հո չե՞ : Միթե Մաշան կա-  
րող և այդպես շքեղ հագնվել : Աղախինները միթե՞  
յերբեւ այդպես հագնվում են :

— Մաշա :


Անհարմար և փողոցում այդպես բարձր կան-  
չել, բայց չդիմացավ, կանչեց :

Յետ նայեց Մաշան, կարմրեց մինչև մազերի  
արմտաները, չար փայլով փայլեցին աչքերը . . .  
յետ դարձավ ու կրկին շտապ մտավ տուն : Մաշան  
չկար :

Շփոթվեց խեղճ տղան : Բայց դուրս իսկի այդ  
կինը Մաշան չե՞ : Իսկ այդ դեպքում՝ ինչո՞ւ այն-  
պես կարմրեց : Ինչու իսկույն ներս մտավ : Ձե-  
սայտեղ մի ինչ վոր բան կա . . .

Մտանցավ Բոկատցեկին այն դուռը, ուր ան-  
հայտացավ Մաշան : Նայեց . . . Մարդ չի յերևում . . .  
կանգնեց փոքր ինչ, մտածեց . . . Հանկարծ հիշեց  
հանձնարարած ծրարի մասին և քայլեց առաջ :

Բոկատցեկի լավ արամադրութիւնն անհայ-  
տացավ, — ինչու՞մն և բանը չի կարողանում հաս-  
կանալ . . . Վորոչեց Մակարենկոյի հետ խորհրդակ-  
ցել :





Մակարենկոն միայն մի հարց տվեց.

— Լավ հիշի՛ր: Այդ քո Մաշան ուղղակիան դործերի մասին հարց ու փորձ չե՞ր անում:

— Ինչպե՞ս չէ: Ամբողջ ժամանակ հետաքրքրվում եր...

— Գնանք, յեղբայր զնդի հրամանատարի մոտ... Այստեղ լրատուության հոտ է փչում...

— Ինչ ես ասում, Վանյա, կարող ե արդյոք այդպիսի բան լինել:

— Գնանք շուտ. հանկարծ ինքդ խաթի մեջ չընկնես:

\* \*

Գնդի հրամանատարն ուշադրությամբ լսեց մինչև վերջ Բոկատցեվի պատմությունը: Յեվ ապա սկսեց ինքը հարցեր տալ:

— Յե՞րբ եք ժամադիր յեղել:

— Վաղը, ընկեր հրամանատար, կայարանի յետեվի անտառակում...

— Ժամի քանիսի՞ն նա պետք է դա:

— Խոստացավ ճիշտ ժամի տասներկուսին...

— Լավ: Վաղը դուք կզնաք տեսության, կարծես վոչնչից տեղեկություն չունենալով: Նրա բոլոր հարցերը լավ կհիշեք. ինքներդ խուսափողական պատասխաններ կտաք... Ճանապարհին, քաղաքի ծայրին կբաժանվեք իրարից: Այնուհետև նրան կհետեվեն, իսկ դուք անմիջապես կնկրկա-

յանաք ինձ: Առ այժմ կարող եք դնալ...

Կարմիր բանակայինները զնացին: Գնդի հրամանատարը մոտեցավ հեռախոսին:



— Տվեք 55—42: ԳՊՈՒ. խնդրեք հեռախոսի մոտ Հատուկ Բաժնի պետին: Ընկ. Զավալով. այո՞: Ձեզ հետ խոսում եմ № զնդի հրամանատար Միրսկին: Ահա թե ինչ է պատահել...

Յեվ նա մանրամասնորեն պատմեց յեղելությունը:

Բայց Զավալովն այլ կարծիքի յեր...

— Միթե՞ կարելի չէ սպասել մինչև վաղը: Յեթե նա փախել է կարմիր բանակայինից, ուրեմն հասկացիլ է, վոր բանակայինը ձանաչել է



նրան... Միթե՞ նա կզա այսուհետև տեսուիթյան :  
Վերցրե՞ք ձեր կարմիր բանակայինն և անմիջա-  
պես ինձ մտ յեկեք : Նրան հենց այսոր պետք է  
լռնել, կարող է ձեռքներիցս դուրս պրծնել...  
դե՛հ, առ այժմ...

Կես ժամ անց Միրսիկն և ծայր աստիճան չը-  
վոթված Բոկատցեյը ներս մտան Հասուկ Բաժնի  
պետի առանձնասենյակը :

— Դեհ, ուխաժոր, պատմեցե՞ք,— դիմեց Ջա-  
վարովը Բոկատցեյին,— պատմեցե՞ք սկզբից ամեն  
ինչ և ամենամանրամանն ձեռով :

Բոկատցեյը ստիպված էր նորից կարմրելով  
ու կրճկմարով պատմել ամբողջ պատմությունը :

— Այն դուռը, ուր ներս մտալ, կճանաչե՞ք :

— Ի հարկե, կճանաչեմ,— կես ժամ պատմում  
էյի նրա շուրջը, ուզում էյի իմանալ, վո՛ր սեն-  
յակը մտալ :

— Լավ : Գնանք : Յուրջ տվե՛ք ճանապարհը :

Ահա և չքեղ սանդուխքը : Յեկան տնային կո-  
միտեն... Ջավարովը ներկայացրեց մանդատը...

— Ապրո՞ւմ է ձեզ մտա վոմն Մարյա Իվա-  
նովնա Պավլովա : Վո՞՞ք : Այդպես էլ գիտեյի : Իսկ  
չի՞ ապրում արդյոք մի դեղեցիկ կին վոսկիհեր  
դիտով :

Յեզ Ջավարովը սկսեց այնպես նկարագրել

Մաշայի արտաքինը, վոր նա կարծես կենդանի  
պատկերացալ Բոկատցեյի առջև :

— Կա, կա այդպիսի մեկը : № 6 բնակարա-  
նում մի բնակարան է վարձել յերեք շաբաթ ա-  
ռաջ Կիևից յեկած...

— Այդ ի՞նքն է ասել, վոր Կիևից է յեկել :

— Նրա փաստաթղթերը վաղերացված են Կի-  
ևում... ասա մեր նշումը,— Կսենյա Պետրովնա  
Պոլյակովա...

— Լավ : Յուրջ տվե՞ք, խնդրեմ № 6 բնակա-  
րանը և յեկեք մեզ հետ...

Չանդի ձայնին դուրս յեկալ ասնտիրուհին,  
հասակավոր մի կին : Նա շատ վախեցալ, յերբ  
լո՞՞ացալ, վոր յեկել են ԳՊՈՒ-ից :

— Այստե՞ղ է ապրում քաղաքացի Պոլյա-  
կովան :

— Այո՛, այստեղ է : Սակայն նա այժմ տանը  
չէ : Մի ժամ կլինի, ինչ նա հեռացել է...

— Յուրջ տվե՛ք նրա սենյակը :

Մոտեցան դռանը : Սենյակը փակ է :

— Յես ունեմ յերկրորդ բանալի,— առաջար-  
կեց տանտիրուհին :

Բացեցին : Ջավարովն առաջինը ներս մը-  
տալ...

— Թո՞չնիկը թո՞նլ է,— քացականչեց նա :



Յեւ վ իրոք, սենյակի արտաքին տեսքը վկայում էր, վոր այստեղ ապրողն այլևս չեր վերադառնալու:

Ամբողջ հատակը ծածկված էր թղթի կտորներով, կանացի հազուստեղենի մասերով:

Կամոզի աչքերը հանած էյին: Պահարանը բաց, մեջի իրեղենները թափթփված: Ամեն ինչից յերևում էր, վոր սենյակի տիրուհին խիստ չտապել է, իրեն անհրաժեշտ իրերը հավաքելիս:

— Ահա նա, ահա նա, բացականչեց հանկարծ Բողատցելը, բարձրացնելով մահճակալի տակ ընկած չթի կոֆտան:—Այդ կոֆտան հագին նա յիկել էր անտառը:

Զավալովն ու Միրսկին իրար յերես նայեցին: Տանտիրուհին մե'րթ մեկին էր նայում, մերթ՝ մյուսին, չհասկանալով, թե բանն ինչումն է:

— Ուր է գնացել ձեր կենսվորը:

— Զգիտեմ, վոչինչ չասաց:

— Ինչպե՞ս էր հագնված: Ի՞նչ էր ձեռքին:

— Հագել էր կապույտ վերնաշապիկ և նույնպիսի շրջազգեստ, սեւ գլխարկ, ձեռքին ուներ մի փոքրիկ շաքանակագուռնս պայուսակ...

— Ինչպիսի՞ կոշիկներ, ի՞նչ գուլպաներ ունէր հագին:

— Սև տուֆլիներ և սև գուլպաներ...

— Վորտե՞ղ է ձեր հեռախոսը:

— Ներքև բարսպանի մոտ:

— Ընկ. Միրսկի, խնդրում եմ մի ըրալ մնալ այստեղ. իսկույն կվերադառնամ...

Հինգ ըրալելում արդեն բոլոր նավահանգիստներն ու կայարանները տեղեկացրված էր, թե ում է հարկավոր բռնել:

Յերբ Զավալովը վերադարձավ, հայտնեց.

— Զի փախչի մեր ձեռքից:

— Ընկ տնկոմի անդամ, յես այժմ կիսուզարկեմ սենյակը,—դուք և ընակարանի տանտիրուհին խուզարկությանը վկա կլինեք:

Սուզարկությունը յերկար չտեւեց... Վոչինչ չգտան.—Զավալովը վերցրեց իր հետ միայն մի դիրք վոր ընկած էր հատակին: Յերբ նա բացեց դիրքը, այնտեղից մի նամակ ընկավ:

Զավալովն արագ աչքի անց կացրեց նամակը, վեր քաշեց ուսերը և նամակը կրկին դրքի մեջ՝ դրեց:

Նորից նստեցին ավտոմոբիլը, դնդի հրամանատարին գորանոց հասցրին:

— Ընկեր Միրսկի, դուք ինձ այլևս հարկավոր չեք լինի. շատ շնորհակալ եմ ձեր ոգնության համար: Բողատցելին առ այժմ կպահեմ... նա ինձ դեռ պետք է:



Վերադարձան ԳՊՈՒ :

Զավարովը նստեց սեղանի մոտ և խորատուգլեց բերած գրքի մեջ: Յերես, յերեսի յետևից նա թերթում եր գերբը և ուշադրությամբ դիտում տողերը:

— Կա... — հանկարծ բացականչեց նա:

Յեզ ասպա դիտում և ալիլի մեծ ուշադրությամբ: Բողատցեն ուզում և խմանալ, թե ինչ և դատել Զավարովը, բայց վախենում և հարցնել: Բայց Զավարովն ինքը դիմեց նրան:

— Գրագետ ե՞ք:

— Կարգալ լավ գիտեմ, բայց գիրս վատ և:

— Նայեցեք այս յերեսի վրա. ի՞նչ տանձին բան եք տեսնում:

— Յերես և, ելի. երեսի նման: Առանձին բան չեմ տեսնում:

— Իսկ տատերի տակ կետեր չե՞ք նկատում:

Այ, «ա»-ի տակ, ա՛յ «դ»-ի տակ, ... տեսնում եք:


— Տեսնում եմ... այդ կետերից այստեղ շատ կա:

Յեզ իրոք, Բողատցելին ցույց տված և չի վրա շատ տատերի տակ համարյա աննշմարելի կետեր կային:

— Ահա թե ի՞նչ և այդ նշանակում: Ձեր «Աս»

չան» իր բարեկամից ստացել և այս գերբը, իսկ նրա մեջ հատուկ ձևով նամակ և գրված: Գրքի միայն այն տատերն են կարդացվում, վորոնց տակ կետ և գրված... դեհ, սկսե՞ք չոկել...

Զավարովը վերցրեց մի ձևրմակ թուղթ և ըստից նրա վրա գրել ընդգծած տատերը:



— Ինչ հիմար բան և... վոչինչ չի ստացվում...

Թղթի վրա իրար յետևից գրված էին.

— քն ելլեղոթը ուղենտ յաքնենցրեկիցեկնամ-խավրկիրյահքերգատեհմուք պեղիգնատովրկանա քերենտամ ոտվախմեստիսիվորոգոեֆիրեն-



նացար հուրերը ցաղն գրեցեցիր սպասեալ արովախ-  
լի—

— Ինչ հիմար բան է,— կրկնեց Չավարովը  
վոչինչ չեմ հասկանում...

Նորից մտքի մեջ ընկավ: Հոնքերը կիտեց:  
Հետո ժպտաց և կրկին իր մոտ կանչեց Բողա-  
ցեվին...

— Դեհ հիմա կարդացեք աջից դեպի ձախ...  
Յեվ յերբ Բողատցեվը սկսեց կարդալ, ստաց-  
վեց.

«Գլխավորապես պարզեցեք գնդացրերի ու  
հրացանների, Ֆեոդորովի սխտեմի ավտոմատ-  
ների քանակը: Վտանդի դեպքում, հեռագրեք՝  
«հայրիկը վախճանվեց»: Կվերցնենք այնտեղ ուր

— Այ, այդ արդեն սքանչելի յե: Փաստ է:  
ուռնեցանք մեր ձեռքին: Միայն թե ի՞նչ է նշանա-  
կում՝ «Կվերցնենք այնտեղ, ուր թողել ելիք»:  
Լավ. առ այժմ ստուգենք նամակը: Արտաբերնից  
թվում է, թե կասկածելի վոչինչ չկա... բայց և  
այնպես ստուգենք:

Չավարովը վառեց մոմը և նամակը սկսեց  
տաքացնել մոմի վրա: Սկզբում առանձին վոչինչ  
չեք նկատվում, բայց մի քանի վարկյանից հետո  
տողերի տակից սկսեցին նոր տողեր յերևալ: Մի

րուպի անց արդեն կարելի յեր մի քանի նոր տո-  
ղեր կարդալ:

— Այ քեզ հրաշք,— բացականչեց Բողա-  
ցեվը.

Սա ի՞նչ ուր եր այտուր:

— Այստեղ հրաշք չկա... նամակը գրված է  
հատուկ թանաքով: Այսպիսի թանաքը գրելիս վոչ  
մի հետք չի թողնում: Բայց յերբ թուղթը մի  
փոքր տաքացնում ես, գրածն իսկույն յերևում  
է: Տեսնենք հիմա, թե ինչ է գրված նամա-  
կում...

Թղթի վրա դուրս յեկան հետևյալ խոսքերը:

«Առևտուրը լավ է: Ապրանքը վաճառվում է:  
Ուղարկեցեք մրգեղենը լավ ամրացրած արկղնե-  
րով ըստ հնարավորին: շուտ: Յեթե վոչ՝ յեղածը  
կսպառվի, կվնասվենք: Մենք տեղեկանքներ այդ  
մասին վաղուց ձեզ ուղարկել ենք: Ինչու չեք  
կատարում մեր խնդիրը և ապրանքն ուչացրիք:  
Մենք արդեն վաղուց ձեզ փոխադրել ենք դրամ,  
ինչպես խնդրել ելիք դուր: Հաշիվները նույնպես  
ուղարկել ենք»:

— Դե հիմա, յերիտասարդ սիրահար, կար-  
դացեք նամակի յուրաքանչյուր յոթերորդ խոսքը.  
ահա յես ընդգծում եմ.

Յեվ Բողատցեվը կարդաց.



— Ուզարկեք շուտ տեղեկանքներ: Ինչո՞ւ ուզայրիք: Դրամը ուզարկել ենք»:

— Ահա թե ինչով եք զբաղվում ձեր «Մաշան»: Մրգեղենի առևտուր ունեք: Լավ մրգեր են, խոտք չունեմ ասելու: Դե՛հ, հիմա գնանք հեռադրատուն:

Հեռադրատանը Չավալովը սարգեց, վոր՝ «Հայրիկը վախճանվեց»—հեռագիրն ուզարկել է մի յերիտասարդ, գեղեցիկ կին մի ժամ առաջ հեռակալ հասցեյով՝ Կիյեվ, Կրեչատիկ. № 5, բնակարան 8, Իոսիֆ Անտոնովիչ Գորսկուն»: Բացի «Հայրիկը վախճանվել է» բառերից հեռագրում յեղել է՝ «մեկնում եմ. Յազվիկա»:

— Այդպես ուրեմն, սիրելի Բոկատցեյվ ձեր Մաշան այսօր յերկրորդ անգամն է, ինչ փոխում է իր անունը:

Մի քանի րոպեյից հետո հեռադրալարերով Կիյեվ եր թռչում մի այլ հեռագիր՝ «Կիև ԳՊՈւ: Անմիջապես ձերբակալեք Իոսիֆ Անտոնովիչ Գորսկուն, վորն սպրում է Կրեչատիկում № 5 տանը, 8 բնակարանում»:

\* \* \*

Յերեկոյան փոստատար ցնացքի մեկնելուց առաջ Բոկատցեն ու Չավալովը դրամնում էյին կա-

յարանում: Կայարանում մեծ բազմություն կար: Բայց «Մաշան» դեռ չէր յեկել: Բոկատցեն իրեն անհարմար եր զգում. խանդարում եր գնովի մարտըը, վոր վարպետորեն կպցրված եր նրա այտերին ու ծնոտին: Բոկատցեին ամեն րոպե թրվում եր, վոր յեթե գլուխը դարձնի, մորուքը վայր է ընկնելու: Նրա շարժումներին խանդարում եր նույնպես քաղաքացիական հագուստը, վոր կրում եր նա կարմիր բանակայինի զգեստի փոխարեն:



Հանկարծ Բոկատցեը ցնցվեց... Ուղիղ նրանց դեմ դալիս եր «Մաշան» սպիտակ զգեստը հա-



դին: Շքեղ մազերը շեյին յերևում. ծածկված էյին վարդագուշն մետաքսե գլխարկի տակ: Փոքրիկ վռտները պատած էյին բաց մոխրագուշն դուլպաներով ու դորշ տուֆլիներով: Ձեռքում բռնած ունեք միայն մի վերմակ, փոկերով կապոտած: Հայացք ձգեց Բոկատցեի վրա... չճանաչեց, իհարկե: Դիմեց բեռնակիրներից մեկին. — Բարի յեղեք գնելու մի տոմս մինչև Կիև փափուկ վագոնում...

Բոկատցեը կմշտեց Չավարովի թևից—այդպես եր պայմանավորված:

— Նա՞ յե, — հարցրեց Չավարովը.

— Այո՛, նա յե, վոր կա:

— Ուրեմն նորից շորերը փոխել ե: Բայց լավ ճաշակ եք ունեցել, ինչպես տեսնում եմ:

Բոկատցեը կարմրեց և վռչինչ չպատասխանեց:

Գնացքը մոտեցավ: «Մաշայի» հետ միեկնույն վագոնում գնում էյին Չավարովը, Բոկատցեը և ԳՊՈւ-ի յերկու աշխատակից: — Չավարովի ոգնականները: Գիշերը հասավ, բայց նրանցից վռչ մեկը քնած չեր:

Կես գիշերից անց եր: Չավարովն ու նրա յերկու ոգնականները հերթով դիտում էյին լճը—

տեսուհուն, վորը պառկած եր հարևան կուպեյում:

Բոկատցեը կյանքում առաջին անգամն եր գնում այդպիսի վագոնով: Փափուկ նստելատեղի զսպանակները թեթև վեր ու վայր էյին գցում նրան որորում, այնքան, վոր նա սկսեց ննջել:

Կողքից ստացած թեթև հարվածը նրան իսկույն ուշքի բերեց:

— Նա դուրս յեկավ, — լսեց Չավարովի ձայնը, — հետևեցեք ինձ, միայն կամաց:

Գնացքը կանգնել եր մի ինչ—վոր փոքրիկ կայարանում:

Լուսնկա գիշեր եր. լույս եր ցերեկվա պես: Չավարովը կամաց ցած թուով կայարանի հակառակ կողմը և թաքնվեց ծառերի ստվերում: Բոկատցեը ծածկվեց նույն տեղում: Կես ընկալից հետո Չավարովի ոգնականներից մեկը միացավ նրանց ու հաղորդեց.

— Անցավ ա՛յ, այնտեղ, հասավ սլաքավարի տնակը և ապա թեքվեց դաշտային ճանապարհի վրա: Վասիլենկոն նրան հետևում ե:

Շարժվեցին ցույց տված ուղղությամբ: Հենց վոր թեքվեցին ճանապարհի վրա թիկերից դուրս յեկավ Վասիլենկոն:

— Այ, այստեղ նա նստել եր, կոչիկները փո-



խեց... Ահա նա, զնում է, տեսնո՞ւմ եք:

— Դուք յետ կմնաք,—կարգադրեց Զավա-  
լովը,—յետ մենակ անմիջօրեն կհետապնդեմ  
նրան: Դուք կչարժվեք սովերով այնպիսի տա-  
րածութեամբ, վոր տեսնեք ինձ... կրակեցի թե  
չե, վաղելով հասեք ինձ:

Կինը շատ արագ եր քայլում: Զավալովը  
հետևում եր նրան, ձեռք առնելով բոլոր նախա-  
դրուչական միջոցները, վոր չնկատվի:

Շուտով ճանապարհն անցավ անտառով,  
ծածկվելը հեշտացավ:

Մոտ մի ժամ քայլելուց հետո կինը կանդ  
առավ, նստեց հանգստանալու: Մի քսան բոսի-  
յից հետո նորից վեր կացավ ու շարունակեց մտա-  
ժամ ու կես քայլել առանց կանդ առնելու: Ան-  
տառը նոսրացավ, հանդիպեցին մի մեծ բացատի:

Կինը փոեց մի ինչ-վոր կտոր և հանգիստ  
սլառկեց նրա վրա:

Զավալովը կանդ առնելով անտառի ծայրում,  
սկամա դարձացավ նրա հանդստութեան վրա:

Ժամանակն անցնում եր. կինը հանգստա-  
նում եր: Լուսարացին նա վերադարձավ ան-  
տառի յեզրին, թաղնվեց մեծ թփի յետևում և  
այլևս չչարժվեց: Բոկիացին ու յերկու ազենա-  
ները մոտեցան Զավալովին. նրանք չէին կարո-

ղանում խոսել նույնիսկ չչուկով, վախենալով,  
վոր նրանց կլսի լրտեսուհին:

Մոտենում եր կեսօրը: Բոկիացին տան-  
ջում եր քաղցն ու ծարավը, տանջում էր կեղծ  
մորուքը, բայց ամենից շատ տանջում եր այս  
ամբողջ պատմութեան չհասկանալը: Ինչո՞ւ յեն  
նրանք այստեղ սլառկել: Ինչու չեն ձերբակա-  
րում լրտեսուհուն: Զավալովը հոնքերը կիտած  
մեծ ուշադրութեամբ դիտում եր չորս կողմը,  
և նրա հայացքը շարունակ վերադառնում եր դե-  
պիս այն թուփը, վորի յետևում նստած եր լրտե-  
սուհին:

Հանկարծ կինը բարձրանում է: Նա ձեռ-  
քում ունի մի կտոր սպիտակ քաթան: Կինը  
դուրս և դալիս բացատի մեջ տեղը փռում է կը-  
տորը խոտի վրա և անկյուններին քարեր դնում:

Բոկիացիներ տեսնում է, ինչպես Զավալովի  
աչքերը փայլատակում են բարկութեանից:

Նա շուտով հրամայում է յերկու ազենուին  
ել, անտառի յեզրով զգուշութեամբ անցնել բա-  
ցատի մյուս կողմը և թաղնվել թփերում: Ա-  
զենաները բացատրութեան են խնդրում, բայց  
այլևս ժամանակ չկա... կինը վերադառնում է:  
Ահա նա կրկին թփի յետևումն է: Ազենաները  
սողալով անցան նշանակված տեղերը: Զավա-  
լովի ձեռքում վայլեց ատրճանակը: Նա գրպա-



նից հանեց յերկրորդ ատրճանակը և նշաններով հարցրեց Բոկատցեին, թե արդյոք կրակել զխոս՞ ատրճանակից: Բոկատցեը զբախան շարժում արավ զլիսով:

Նորից անցավ մոտ մի ժամ... հանկարծ Չափալովը ահանջները սրեց: Աչքերը վեր բարձրարեց—այնտեղից մի խուլ զուռոց եր լսվում:



Կինը նույնպես լսեց զուռոցը: Նա վտարի կանգնեց, աչքերը հառեց յերկնքին...

— Սալառնակ,—անցավ Բոկատցեի մտքով: Յեվ իրոք բացատի վրա յերեսաց մետաղի թուչունը:

Ողաչուն նկատեց աղբանշանը,—բացատի վրա փռած քաթանը և սկսեց պտույտներ զործել իջնելու համար:

Դրզուռը դադարեց. և մի քանի վայրկյան անց սալառնակը զետին իջավ:

Կինը վազեց գեպի սալառնակը, վորից ողաչուններից մեկը ցած եր թուչել:

Նույն այդ վայրկյանին ճայթեց ատրճանակը: Կրակողը Չափալովն եր, սակայն գնդակը վրիպեց: Ատրճանակի կրակոցներ լավեցին և բացատի հակառակ կողմից: յերկու զործակախն ել զեպի սալառնակն եյին վազում, կրակելով ատրճանակներից:

Գետին իջած ողաչուն բանեցրեց մոտորը, յերկրորդ ողաչուն իրար յետևից կրակում եր Չափալովի վրա: Ագենտները զեռ շատ հեռու եյին:

Վտանդի գիտակցությունը ուժ եր ասլին կնոջը. նա վոչ թե վազում, այլ թուչում եր զեպի սալառնակը: Ահա նա արդեն սալառնակի մոտ ե... ողաչուն մեկնում ե ձեռքը... կինը նրա ողնությամբ բարձրանում ե սալառնակի վրա... Չափալովի բերնից թուչում ե հայհոյանք:



Մոտորը բանի յե դրված... մեխանիկն ուղում է վերև բարձրանալ... ահա նա վտար դրեց սավառնակի վրա: Այդ բույեյին Չավալովի դեղակը հասնում է նրան: Մարմինն ամբողջ ծանրությամբ ընկնում է սավառնակի մեջ: Կինն խնույն վերցնում է սպանվածի ատրճանակը և առաջին իսկ դեղակով վերափորում Չավալովին ձախ ձեռքից:

Բայց Չավալովն ասողը ձեռքով բռնում է յերկաթալարից և փորձում բարձրանալ սավառնակի վրա... Ողաջուն կրակում է գործակալները վրա, փորոնք արգեն մոտ են... Մեկ էլ Վասիլենկոն վայր է ընկնում... Յերկրորդը կանգ է առնում... վհատվեց... Կինը թեքվում է Չավալովի վրա և սկսում ատրճանակի կոթով ուժով խփել նրա գլխին:

Չավալովը կորցնում է գլխակցությունը և ընկնում խոտերի վրա:

Ողաջուն վազում է գետի գեղը, և սավառնակը շարժվում է տեղից:

Չավալովի առաջին կրակից Բոկատցեը գլխի ընկավ, վոր հասել է գործելու ժամանակը... Բայց թե ինչ պետք է անել, նա չէր հասկանում:

Բայց վորովհետև Չավալովն առաջ նետվեց, Բոկատցեը վաղեց նրա հետեվից: Քաղաքացիական հազուսար խանգարում էր նրան: Ուղղու-

թյունը ճիշտ չվերցնելով նա հասավ սավառնակի սղջին այն ժամանակ, յերբ յերկրորդ ողաջուն սպանվեց: Բոկատցեը տեսավ, վոր վիրավոր Չավալովը ձգտում է բարձրանալ սավառնակի վրա, նա սկսեց նույնն անել: Մի շաբբ յերկաթալարեր տալիս էյին նրան այդ հնարավորությունը: Վոչ ողաջուն, վոչ կինը չնկատեցին նրան: Այն բույեյին, յերբ սավառնակը ցնցվեց, Բոկատցեի ձեռքից ատրճանակն ընկավ սավառնակի մեջ: Յնցումից կինը յետ նայեց և վրա հասավ իր նոր հետապնդողի գեմ: Նա ձեռքը ձգեց Բոկատցեի մորուքին, և մորուքը մնաց կնոջ ձեռքում:

— Պյտոր,— կանչեց սարսափով կինը:

Բոկատցեը մի հարվածով նրան հրեց մի կողմը և բռնեց ողաջվի բկից: Նույն մոմենտին Բոկատցեը մի սուր ցավ զգաց թիկունքում, այդ նրա Մաչան էր, վոր մի շարաթ առաջ դուրդուրում էր նրա գլուխը, իսկ այսուր շեշտակի գընդակ էր հասցնում թիկունքին:

Մի քանի վայրկյանից հետո մի ուժեղ հարված խրացրեց նրան, և նա կորցրեց գլխակցությունը:

\*

\* \* \*

Յերբ Բոկատցեը սեզմեց ողաջվի կողորդը,



վերջինս ակամայից բաց թողնց զեկալարման լծակը: Սալառնակը, մնալով առանց զեկալարության, թեքվեց մի կողմի վրա, անխնայով



կառչեց մոտակա ծառից և շուտ դալով, վայր ընկավ գետին: Մեխանիկի գլխին ու կենդանի Բոկատցեը վայր թափվեցին խոտի վրա: Ողաշուն ու լրտեսուհին մնացին սալառնակի տակ, վորից սկսեց ծուխ ու բոցեր բարձրանալ: Կենդանի մնացած ազնետը շտապեց բոցավառվող սալառնակի մոտ և Բոկատցեվին քաշեց, հեռացրեց կրակից:

Զավալովը վոչինչ չեր զիտակցում: Նրան

ուշքի բերելու բոլոր ջանքերն ապարդյուն ելին անցնում:

Սալառնակը բոցավառվում էր: Ողաշվից ու կնոջից վոչինչ չեյին մնացել բացի այրված վոսկրներից...

Վիրավորներին տեղացի դյուղացիների ունությամբ տարան հիվանդանոց:

\*  
\*  
\*

Հաջորդ օրը լրագրերում գետեղված եր այսպիսի մի հեռագիր.

«Կիև: Այսօր ինքնասպանություն գործեց վոմն Գորսիկին, յերբ փորձում ելին նրան ձերբակալել:

Գորսիկու բնակարանի խուղարկության տրվյալները կասկածի տեղիք չեն տալիս, փոր ինքնասպանը մի մեծ լրտեսական կազմակերպության պարագլուխ էր: Վճռական միջոցներ են ձեռք առնված գոնելու համար կազմակերպության մյուս անդամներին»:

Բոկատցեվն ուշքի չեկալով միայն հիվանդանոցում: Նրա աջ ձեռքն ու կողերը ջարդված ելին: Նրա կողքին պառկել էր Զավալովը: Հարեանությունն ու յերկար ժամանակ միասին բժշկվելը մեռեմացրել էր նրանց:

Ամենից առաջ Բոկատցեվը խնդրեց բացատրել



իրեն յնդելությունը: Նրան գլխավորապես հետաքրքրում էր այն հարցը, թե վորտեղից յնկալ սովանակը և ինչպես դաավ լրտեսուհուն:

— Գիտես ինչ, սիրելիս, — սկսեց Զավարովը, — թեև ներկայումս բուրժուական պետությունները մեզ հետ բացահայտ կերպով կռիվ չեն մղում, բայց և այնպես նրանք բոլոր միջոցներով աշխատում են խանդարել մեր աճմանը: Նրանք սպասում են, վորպեսզի մեր թուլության բողոքին հարձակվեն մեզ վրա: Այդ հարձակմանը նրանք մասնակցում են բոլոր ուժերով: Ամենից առաջ նրանք ուղարկում են մեր դեմ լրտեսներ, վորպեսզի տեղեկանան մեր ուժերի մասին: Ինչպե՞ս տեսար, լրտեսությամբ զբաղվում են և կանայք:

Կարելի չե զբաղ դա, վոր քո Մաշան ևլ հանձնարարություն ևր սաացել՝ դանել մի անվորձ գյուղացի յերիտասարդ բռնակային և նրանից հարց ու փորձ անել այն ամենի մասին, ինչ հարկավոր ևր նրանց: Քո վստահությունը չահելու համար, նա իրեն պարզ կին ձեվացրեց, իսկ վորպեսզի վոչ մի կասկած չհարուցի ոսգմական հարցերի վերաբերյալ, նա հնարեց պարտիզանական ջոկատում մտնակցելու հեքիաթը: Իու յել ընկար նրա թակարդը: Ճիշտն ասած, ըեզ հարկավոր ևր դատի տալ, վորովհետև դու նրան շատ բան եյիր արդեն հայանել: Պետք և հիշել, վոր ոսգմական գործում

յուրաքանչյուր մանր բան ևլ մեծ կարեվորություն կարող և ունենալ: Կարմիր բանակայինը ոսգմական վոչ մի բանի մասին իրավունք չունի խոսել, մասնախնդ անձանթ մարդկանց հետ: Այ, դու ղիցուք ասեցիր, վոր մենք դնում ունենք 20 գրնդացիք, իսկ քո Մաշան դետե, վոր քաղաքում կա յերկու գունդ: Նա յել գրում և իր կազմակերպությանը՝ «այս ինչ քաղաքում կա 40 գնդացիք»: Իսկ կազմակերպությունը կարող և այդպիսի տեղեկություն կազմել որինակ ամբողջ շրջանի համար: Հասկացա՞ր:

«Իսկ ստիանձակն ահա թե ինչպես խոսնվեց այդ գործի մեջ: Հիշո՞ւմ ես նամակը, վորտեղ ասված ևր թե՛ «կվերցնենք այնտեղ, վորտեղ թողել ենք»: Յես միանգամից չհասկացա, թե բանն ինչումն և, բայց վորոչեցի հետապնդել լրտեսուհուն, թե ո՛ւր պետք և դնա, ո՛ւմ պետք և հանդիպի... իսկ յերբ տեսա, վոր նա քաթան և փուռմ գետնի վրա, իսկույն գլխի ընկա: Լրտեսուհին արտասահմանից ևր... Նրան մեզ մոտ են հասցրել սովանակով և իջեցրել են հենց այնտեղ, վորտեղ հետ յեղավ մեր ընդհարումը... Հենց վոր նա կիյևիվ հեռագրեց, իսկ այնտեղից Գորսկին պայմանական հեռագիր ուղարկեց արտասահման... Սովանակը թոավ յեկալ ծանոթ տեղը... Հանկուցա՞ր հիմա: Բայց ըիչ ևր մնում փախչել մեր ձեռքից:



Իսկ ինչո՞ւ յես դու նոթերդ այդպես կիտել :  
 Բայց Բոկատցեվը յերկար լուռ եր 'և մոռյլ  
 նայում եր առաստաղին :

— Ինչու չես խոսո՞ւմ , ի՞նչ ե պատահել :

— Ուրեմն հիմա ինձ դատի կտա՞ն , հա՞ :

Զավարովը ծիծաղեց :

— Հարկավոր եր դատի տալ , վոր ստալին  
 պատահած կնոջ հետ այլևս չչատախոսես : Յեթե  
 քո «Մաշան» շտապելուց չմոռանար գրքույկը , վոչ  
 մի կերպ չեյինք կարող բռնել նրան : Քո մասին հը-  
 բամանատարդ արդեն հարցրել ե ինձ . . . Միայն  
 յես պատասխանեցի , վոր լրտեսների դեմ տեղի  
 ունեցած ընդհարման ժամանակ դու քո վարմուն-  
 քով քովեցիր ահամա մեղքդ . . .

Յեվ , Բոկատցեվի դեմքը փայլեց ուրախու-  
 թյունից :



« Ազգային գրադարան »



NL0391288



ԳԻՆԸ 5 ԿՈՊ.

12.168

891.71

ՎՊ-88